

7527

48

1908

329-14

П-18

Հ Ա Յ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ - ԳԱՄԿԱԿԱՐ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ



ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ




1908

2001

2001

ՀԱՅ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ-ՌԱՄԿԱՎԱՐ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ



ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

Յօդ. 1.— Հայ Սահմանադրական-Ռամկավար Կուսակցութիւնը, որ ունի իր ազգային և քաղաքական Մրազիրը, կը բաղկանայ Կեդրոնական Ակումբէ մը, Տեղական Ակումբներէ և Օթեակներէ:

Յօդ. 2.— Հ. Ս. Ռ. Կուսակցութեան Կեդրոնն է Կ. Պոլիս ուր կը գտնուի Կեդրոնական Ակումբը:

Յօդ. 3.— Տեղական Ակումբներ և Օթեակներ կը կազմուին Կեդրոնի, ինչպէս նաև Հայրենիքի և Արտասահմանի հայաբնակ վայրերու մէջ:

ԱՆԳՎԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

Յօդ. 4.— Ամեն Հայ կրնայ անդամակցիլ Հ. Ս. Ռ. Կուսակցութեան առանց դաւանանքի և դասակարգի խտրութեան:

Յօդ. 5.— Անդամակցիլ փափաքողը նախապէս կը ներկայացուի երկու անդամներու կողմէ, և Ակումբին Դիւանը յետ քննութեան կ'ընդունի խնդրարկուն իրրև անդամ:

80307
1638-83

25.12.21



Յօդ. 6.—Ամէն անդամ պարտի ստորագրել մասնաւոր տոմարի մը մէջ՝ ընդունելով Կուսակցութեան Ծրագիրը և ներկայ Հիմնական Կանոնադիրը, և խոստանալով օգտակար ըլլալ անոր նպատակին նիւթական և բարոյական աջակցութեամբ:

Յօդ. 7.—Իւրաքանչիւր անգամ կը վճարէ առնուազն մէկ ամսաբաժին, որուն քանակութիւնը կ'որոշուի Տեղական Ակումբներու կողմէ:

Յօդ. 8.—Ամէն անգամ մէկ ձայն միայն ունի, ինչ որ ալ ըլլայ իր վճարած ամսաբաժինը:

Յօդ. 9.—ԱմսաՎճարէ զերծ են այն անդամները որոնց նիւթական անձկութիւնը կը հաստատուի Տեղական Ակումբին կողմէ:

Յօդ. 10.—Պատիւը արատաւորող արարքի մէջ զանուած և կամ Կուսակցութեան սկզբունքներուն դէմ գործող ու է անգամ Ակումբէն կ'արտաքուսի, յետ քննութեան:

ՕՐԵԱԿՆԵՐ

Յօդ. 11.—Ու է տեղ մը՝ երբ Կուսակցութեան անդամակցողներու թիւը 15 է պակաս է, կը կազմուի Օթեակ մը, որ կը կապուի մօտակայ Ակումբի մը հետ: Օթեակը իր մէջէն կ'ընտրէ Նախագահ մը որ Օթեակին անունովը կը թղթակցի Ակումբին հետ:

Յօդ. 12.—Տեղական Ակումբներն ալ կըր-

նան ունենալ իրենց Օթեակները՝ իւրաքանչիւրը առնուազն հինգ անգամէ բաղկացեալ:

Յօդ. 13.—Ամսաբաժին վճարող Հայուհիներն ալ կրնան կազմել առանձին Օթեակներ, յաճախելով Տեղական Ակումբը և մասնակցիլ անոր խորհրդակցութեանց:

ՏԵՂԱԿԱՆ ԱԿՈՒՄԲՆԵՐ

Յօդ. 14.—Տեղական Ակումբը կը կազմուի առնուազն 15 անդամներէ:

Յօդ. 15.—Տեղական Ակումբները իրենց շրջանակին մէջ ինքնապար են. կը գործեն իրենց պատասխանատուութեան տակ, Կուսակցութեան անունով, բայց կը ներկայացնեն միայն իրենց շրջանակի անդամներուն կարծիքը:

Յօդ. 16.—Տեղական Ակումբները իրենք կը պատրաստեն իրենց ներքին կանոնադիրը և կը հաղորդեն զայն Կեդր. Ակումբին:

Յօդ. 17.—Տեղական Ակումբները կը հոգան իրենց տեղային ծախքերը, կը մասնակցին Կուսակցութեան բրօքականտի ընդհանուր ծախքերուն, ի հարկին ամսավճարներէ զատ հասոյթի օրինաւոր ամէն միջոցներ ստեղծելով: Հասոյթներուն հարիւրին տասը վար կը գրուի իբրև պահեստի գումար բացառիկ պէտքերու համար:

Յօդ. 18.—Տեղական Ակումբները մէկ տարուան համար կ'ընտրէն Դիւան մը որ կը

վարէ Ակումբին գործերը և որուն համարա-
տու է :

Յօդ. 19.— Դիւանը կը բաղկանայ առ-
նուազն երեք անդամներէ, որոնք իրենց մէ-
ջէն կ'ընտրեն նախագահ մը, քարտուղար
մը և գանձապետ մը :

Յօդ. 20.— Դիւանը ամիսը գոնէ մէկ ան-
գամ իր օրակարգը կ'ենթարկէ Ակումբին
անդամներուն խորհրդակցութեան :

Յօդ. 21.— Դիւանը կեդր. Ակումբին կը
հաղորդէ պարբերաբար Ակումբին գործառ-
նութեանց և տեղական հանգամանքներու
մասին տեղեկութիւններ :

Յօդ. 22.— Տեղական Ակումբները կրնան
իրենց Դիւանին միջոցաւ իրարու հետ յարա-
բերութիւն մշակել և համերաշխ գործունէ-
ութեամբ կուսակցութեան ներդաշնակու-
թիւնը ապահովել :

Յօդ. 23.— Տեղական Ակումբները նկատի
կ'առնեն կեդր. Ակումբին խորհուրդները
և թելադրութիւնները և պարտաւոր են
գործադրել կուսակցութեան ընդհանուր ժո-
ղովին որոշումները :

Յօդ. 24.— Տեղական Ակումբները համա-
րատու են կուսակցութեան Ընդհ. ժողովին :

Յօդ. 25.— Տեղական Ակումբի մը լուծ-
ման պարագային, սնոր գոյքերը կը մնան
Հ. Ս. Ռ. կուսակցութեան սեփականութիւնը

և կը դրուին Նահգ. Դիւանի կամ մերձառու-
րագոյն Ակումբի տրամադրութեան տակ :

ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԾՐՋԱՆԱԿՆԵՐ

Յօդ. 26.— Աշխարհագրական դիրքով ի-
րարու մօտ գտնուող Ակումբները իրարու հետ
միանալով կը կազմեն Նահգ. Ծրջանակներ :

Յօդ. 27. — Հ. Ս. Ռ. կուսակցութիւնը
ի ներկայիս կը բաժնուի հետևեալ չրջանակ-
ներու. — Կ. Պոլիս, Օսմ. Պետութեան ամէն
մէկ նահանգ, Եգիպտոս, Ամերիկա, Պուլկա-
րիա և Ռումանիա, Կովկաս, Պարսկաստան,
Եւրոպա :

Ծանօթ.— Նահանգներու այս բաժանում-
ները կրնան յառաջիկային փոխուիլ Տեղական
Ակումբներու առաջարկութեամբ և Ընդհ.
ժողովին որոշումովը :

Յօդ. 28. — Նոյն չրջանակին մէջ գտնուող
Ակումբները պարտաւոր են իրարու հետ սերտ
յարաբերութիւն մշակել, իրենց գործունէու-
թեան մէջ միակերպութիւն և ներդաշնակու-
թիւն յառաջ բերելու համար :

Յօդ. 29.— Նահանգային չրջանակները՝
եթէ պէտք տեսնեն՝ կը կազմեն Նահանգա-
յին Դիւաններ 3-5 անձերէ բաղկացած և
որոնք կը կատարեն չրջանակին կողմէ յա-
րաբերութիւնները՝ կեդր. Ակումբին և ուրիշ
Ակումբներու հետ :

Յօդ. 30.— Նահանգային Դիւանը պատասխանատու է իր շրջանակի Ակումբներու գիւժաններուն և կամ այդ գիւժաններու կողմէ ընտրուած պատգամաւորներու ժողովին, որմէ կ'ընտրուի մէկ տարուան պաշտօնով: Անդամները վերընտրելի են:

ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ

Յօդ. 31.— Կ. Պոլսի Կեդր. Ակումբը կը զբաղի ընդհանուր բրոքականտով և կը ներշնչէ իր խորհուրդները և թելադրութիւնները Տեղական Ակումբներուն:

Յօդ. 32.— Կեդր. Ակումբը պիտի հրատարակէ ամսական տեղեկագիր (Bulletin mensuel) մը կամ գոնէ պիտի շարժէ բոլոր Տեղական Ակումբներուն երեք ամիսը անդամ մը Շրջաբերական Տեղեկագիրներ հաղորդակից ընելու համար անդամները Կուսակցութեան գործունէութեան և յարակից կարևոր անցուդարձերուն:

Յօդ. 33.— Կեդրոնական Ակումբը կը բաղկանայ 9-11 անդամներէ որոնք կ'ընտրուին Կուսակցութեան Ընդհ. Ժողովին կողմէ երկու տարուան համար և վերընտրելի են:

Առաջին Կեդր. Ակումբը՝ բաղկացած 9 անդամներէ՝ կ'ընտրուի հիմնադիր անդամներէն:

Յօդ. 34.— Կեդր. Ակումբը տունուազն շաբաթը անգամ մը նիստ կը գումարէ:

Յօդ. 35.— Կեդր. Ակումբը կ'ընտրէ իր մէջէն Նախագահ մը, Փոխ. Նախագահ մը, Ա. Քարտուղար մը, Բ. Քարտուղար մը, Գանձապետ մը, Համարակալ մը և 3-5 խորհրդականներ:

Յօդ. 36.— Կեդր. Ակումբը կ'ունենայ ի հարկին վարձատրուած պաշտօնեաներ:

Յօդ. 37.— Կեդր. Ակումբը իր գործառնութեանց համար պատասխանատու է Կուսակցութեան Ընդհ. Ժողովին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Յօդ. 38.— Ընդհ. Ժողովը Կուսակցութեան օրէնագիր և համարաւու մարմինն է: Կուսակցութեան գործելակերպի ընդհանուր գիծերը կը նախասահմանուին Ընդհ. Ժողովի կողմէ իւրաքանչիւր ժամանակաշրջանի համար:

Յօդ. 39.— Ընդհ. Ժողովը կ'որոշէ նոյնպէս Կուսակցութեան պիւտձին և կը սահմանէ շրջանակներու մասնակցութեան չափը՝ Կուսակցութեան ընդհանուր ծախքերուն:

Յօդ. 40.— Ընդհ. Ժողովը կը բաղկանայ Կուսակցութեան բոլոր շրջանակներու պատգամաւորներէն:

Յօդ. 41.— Իւրաքանչիւր շրջանակ իր մէկ կամ աւելի պատգամաւորը կուտայ հետեւեալ համեմատութեամբ.

50էն 100	անդամ ունեցող շրջանակները կուտան 1 պատգ.
100 » 200	» » » » 2 »
200 » 400	» » » » 3 »
400 » 800	» » » » 4 »
800 » 1600	» » » » 5 »
1600 » 3200	» » » » 6 »

և այսպէս շարունակաբար:

Յօդ. 42.— Ընդ. ժողովը կը գումարուի երկու տարին անգամ մը Կ. Պոլսոյ մէջ կամ Կեզըր. Ակումբին յարմար դատած ուրիշ մէկ վայրը:

Յօդ. 43.— Ընդհ. ժողովը արաստովոր նիստ կ'ընէ երբ Կեզըր. Ակումբը կամ առնչուազն վեց շրջանակներ պէտք տեսնեն:

Յօդ. 44.— Ընդհ. ժողովը օրինաւոր է երբ շրջանակներուն մեծամասնութիւնը ներկայացուած է: Իր որոշումները կը տրուին ձայներու մեծամասնութեամբ:

ՀԱՍՈՅԹԻ ԱՂԱԽԻՒՐՆԵՐ

Յօդ. 45.— Հ. Ս. Ռ. Կուսակցութեան հասոյթի տղբիւններն են. ամսաբաժիններ, հանգանակութիւններ, նուիրատուութիւններ, ներկայացում, վիճակահանութիւն և այլ օրինաւոր միջոցներ:

ՎԵՐԱԲՆՆԵՆՈՒԹԻՒՆ

Յօդ. 46.— Ներկայ Հիմնական Կանոնագիրը վերաքննելի է Հ. Ս. Ռ. Կուսակցութեան Ընդհանուր ժողովին մէջ:



2013

« Ազգային գրադարան



NL0040326

